«ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄ »

ՀԻՄՆԱԴՐԱՄ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2022

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա-Սասունի ապստանմբության պատճառների ուսումնասիրությունը

Առարկա-Հասարակագիտություն

Հեղինակ-Աննա Բաղդասարյան

Մարզ-Կոտայք

Ուսումնական հաստատություն-Լեռնանիստի միջնակարգ դպրոց

Բովանդակություն

Ներածություն …….2

Գլուխ 1. Իրադրությունը Սասունում 20-րդ դարի սկզբին……...5

Գլուխ 2. Սասունի ապստամբության սկիզբը: Ինքնապաշտպանական ուժերի կազմակերպումը.....……...11

Գլուխ 3. Սասունի ապստամբության ընթացքը……13

Գլուխ 4. Սասունի ապստամբության պարտությունը և հետևանքները……16

Եզրակացություն…….....19

Օգտագործված գրականության ցանկ ……20

Ներածություն

19-րդ դարի վերջին և 20-րդ դարի սկզբին թուրք բռնապետության դեմ հայ ժողովրդի մղած ազգային-ազատագրական պայքարը կարևորագույն տեղ է զբաղեցնում մեր բազմադարյան պատմության մեջ: 90-ական թվականներին կառավարությունը եռանդուն ջանքեր էր գործադրում՝ ձգտելով կիսանկախ Սասունը ծնկի բերելու համար՝ նրա դեմ ստեղծել քրդական միացյալ ճակատ:

Պատմական անցյալով հարուստ և հերոսական սխրագործություններով փառաբանված Սասունը 19-րդ դարի վերջին թուրքական վարչական բաժանումով մտնում է Բիթլիսի վիլայեթի մեջ և կազմում Մուշի Սանջակի գավառներից մեկը: Այն ստորաբաժանվում էր Մոտկան, Խոյթ կամ Խութ, Բռնաշեն, Գենջ, Ճապաղջուր գավառների և իր աշխարհագրական դիրքով տրոհվում լեռնային կամ կենտրոնական ու դաշտային, կամ ծայրամասային շրջանների: Լեռնային Սասունը իր մեջ ամփոփում է 7 գավառներ՝ Շատախի, Ծովասարի, Տալվորիկի, Գավառի, Փսանքի, Խիանքի, Խուլփիի, որոնք իրենց հերթին բաժանվում էին մեծ ու փոքր կամ, ինչպես ընդունված էր ասել, մայր և որդի գյուղերի, համարյա այդպիսի վարչական բաժանման էր ենթարկված նաև դաշտային Սասունը: Ի տարբերություն դաշտային Սասունի, որտեղ մահմեդական ՝ հատկապես քրդական բնակչության թիվը զգալի էր, լեռնային Սասունում այն համարյա աննշան էր:

Սասունի բնակիչները զբաղվում էին երկրագործությամբ ու անասնապահությամբ: Թեպետ և նրանց տնտեսության մեջ գերակշռողը երկրագործությունն էր, բայց անասնապահությունը շարունակում էր խաղալ մեծ դեր:: Սասունի բնական պայմանները հնարավորություն էին տալիս բնակիչներին տնապես պահպանելու իրենց անկախությունը և կիսանկախությունը: Սակայն սուլթանական կառավարությունը՝ վարելով հայաջինջ քաղաքականություն, պատեհ առիթով ներխուժում էր Սասուն և կատարում իր սև գործը: 1900թ. օգոստոսի 26-ին Վանի ռուսական փոխհյուպատոսը հաղորդում էր, որ Սասունում բեյերը «հատկապես վերջին 4 տարում իրենց համարում են լրիվ տերեր և հայրի վրա նայում են որպես ճորտերի»:

Թեմայի արդիականությունը: Հայ ժողովուրդը իր գոյության ընթացքում միշտ էլ ենթարկվել է օտար ցեղերի և ազգերի ճնշումների: Անցնելով դարավոր պատմության հորձանուտով՝ հայը իր գեների մեջ ամրապնդել է ինքնապաշտպանական ոգին և պայքարը՝ հանուն ազատության: այդ պայքարում ունենալով նաև պարտություններ՝ հայի ոգու մեջ ազատության տենչը չի կորել: Դա են վկայում

բազում ինքնապաշտպանական մարտեր, որտեղ անգամ հայ կինը և հոգևորականը զենք են բարձրացնում հանուն իրենց ազատության: Այս երևույթը չի կորցրել իր արդիականությունը նաև մեր օրերում՝ ահռելի արագ տեմպով զարգացող համաշխարհային խառնիխուռն քաղաքականության պարագայում: Ամեն վայրկյան մեր երկիրը կանգնած է պատերազմի շեմին: Ուստի շատ կարևոր է, որ մեր ժողովրդի մեջ արթուն լինի ինքնապաշտպանական և պայքարող ոգին: Սասունի ինքնապաշտպանությունը ևս մի վառ օրինակ է մեր բազմադարյան պատմության մեջ, որը պետք է իմանա ամեն մի հայ: Սասունի ինքնապաշտպանության և հայդուկային պայքարի օրինակին հետևեցին հայերը, որոնք այսօր էլ կռվում են Ղարաբաղի անկախության համար: Հայ զինվորները աչքի առաջ ունենալով Սասունի, Վանի, Զեյթունի պաշտպանների վառ օրինակը, այսօր էլ կռվում են և մեռնում որպես հայրենիքի պաշտպաններ՝ նշանաբան ունենալով Վարդանի խոսքը.«Մահ ոչ իմացեալ մահ է, մահ իմացեալ՝ անմահություն»: Ապագա սերունդների մեջ հայրենասիրություն դաստիարակելու համար Սասունի ինքնապաշտպանությունը և սասունցիների սխրանքը վառ օրինակ են:

Հետազոտման նպատակը և խնդիրները:

«Սասունի ինքնապաշտպանություն» ասելով՝ միանգամից մտաբերում ենք 1894, 1904 և 1915 թվականները: Մինչդեռ Սասունում հայերի դիմադրությունը չի ավարտվել 1915-ով, այլ տևել է մոտ 100 տարի՝ 1890-ականների վերջից մինչև 1990-ականներ:

Խորհրդային ժամանակաշրջանում տասնամյակներ շարունակ մեզ պարտադրված՝ «Հայ ազգը ամբողջովին բնաջնջվեց իր պատմական հայրենիքում» տողերը, ցավոք, շարունակում են տեղ գտնել պատմության դասագրքերում նաև Հայաստանի անկախացումից հետո: Սա գուցե բնական է այն պարագայում, երբ 70 տարի շարունակ արհեստականորեն մեկուսացված ու որոշակի շրջանակներում սահմանափակված հասարակությունը Արևմտյան Հայաստանում տեղի ունեցող իրադարձություններից ո՛չ գաղափար ուներ, ո՛չ էլ ուսումնասիրելու հնարավորություն:

Հայերը այս քաղաքականության զոհն են դարձել հավասարապես և՛ Արևելյան, և՛ Արևմտյան Հայաստաններում: Մինչ Արևելյան Հայաստանում խորհրդային կառավարությունը քարոզում էր մոռանալ անցյալը, աքսորում և նույնիսկ գնդակահարում էր հայրենիքի մասին անգամ երգեր երգողներին, Արևմտյան Հայաստանում կրկնակի կոտորածների, իրավազրկումների, խտրականության ու ամեն կողմից մեկուսացման ենթարկվող հայերը չէին էլ համարձակվում մտածել, թե ինչ եղան սահմանից այն կողմ գաղթած իրենց ազգականները:

Անկախացումից հետո Հայաստանի բոլոր ջանքերն ուղղված էին ավելի շատ եղածը որպես ցեղասպանություն ապացուցելուն, ինչը շատ բնական էր, և այս ընթացքում պարզապես չհասցրինք մտածել Արևմտյան Հայաստանում մնացածների մասին, մանավանդ որ երկար ժամանակ դեռ համոզված էինք, որ բոլորը «ջնջվել են», ինչպես սովորեցնում էին խորհրդային դասագրքերը: Դե, իսկ սփյուռքի տարբեր գաղթօջախներում ջանքերն ուղղված էին հայապահպանությանը և ցեղասպանված ազգի բեկորները ոտքի կանգնեցնելուն, իրենց լեզվի և մշակույթի պահպանման ջանքերի հետ մեկտեղ խնդիր ունեին անցյալի վերքերը նորոգելու, ու դեպի Թուրքիա հայացք գցելը չափազանց դժվար խնդիր էր երկար տարիներ:

Ներկայումս փրկվածների արդեն երրորդ և անգամ չորրորդ սերունդները, երբեմն իրար փնտրելով և գտնելով, բախվում են այնպիսի խնդիրների, որոնք հաղթահարելը չափազանց բարդ ու զգայուն հարց է. տարբեր լեզուներ, այլ մտածողություն ու ապրելակերպ և երբեմն՝ նաև կրոն:

Ցավոք, ժամանակն աշխատել է ի վնաս մեզ: Այժմ Արևմտյան Հայաստանի և այնտեղ մնացած հայերի մասին ուսումնասիրություն կատարելը թեև ավելի դյուրին է դարձել, սակայն այսքան ժամանակ անց շատ քիչ են մնացել բուն հիշողության կրողները, ովքեր մեզ պիտի ժառանգեին այն, ինչը բաց ենք թողել 100 տարվա ընթացքում

Թեմայի ուսումնասիրման կարևորագույն նպատակը 19-րդ դարավերջի և 20-րդ դարի սկզբի իրադարձությունների համեմատելն է 20-րդ դարավերջի և 21-րդ դարի սկզբի Հայաստանում տեղի ունեցող պատմական և ճակատագրական իրադարձությունների հետ,վեր հանել և ուսումնասիրել այն խնդիրները, որոնք կապ ունեն հայ ժողովրդի ազատագրական պայքարի հետ,համեմատել հայդուկների և արցախյան ազատագրական պայքարի հերոսների գործունեությունը,գնահատել և արժևորել այդ սխրանքները և ,ի վերջո, այդ պայքարի ոգով դաստիարակել հայրենասեր սերունդ;

Հետազոտման առարկան և ժամանակաշրջանը:

Թեմայի ժամանակաշրջանը հանդիսանում է 20-րդ դարի սկիզբը, իսկ առարկան՝ Սասունի 1904թ. Ինքնապաշտպանությունը

Հետազոտական **աշխատանքի կառուցվածքը:**

Աշխատանքը կազմված է ներածական մասից, չորս գլուխներից, եզրափակիչ մասից, և վերջում նշվել է այն գրականության ցանկը, որն օգտագործվել է սույն աշխատանքը գրելու համար:

Գլուխ 1. Իրադրությունը Սասունում 20-րդ դարի սկզբին

Սուլթանական բռնապետության կեղեքիչ և դաժան կարգերը կործանարար ազդեցություն ունեին հայ աշխատավոր գյուղացիության վրա: Գյուղացիական բազմաթիվ տնտեսություններ հարկերի ծանրությունից սնանկանում էին: Հողազուրկ գյուղացին կամ ստիպված էր հեռանալ իր բնակավայրից, կամ հարկադրված էր դառնալ զավթիչ բեկի «մարաբան» (ստրուկ) և նույնիսկ «խաֆիրը»(ճորտ): Խոշոր հողատերերը չնչին վարձատրությամբ կեղեքում էին գյուղացիներին: Սուլթանական կառավարությունը օգտագործվող հողի վրա հայ գյուղացու իրավունքը հաճախ կախման մեջ է դնում դավանափոխությունից: Դա դեռ բավական չէր, երբ 1901թ. մայիսից թուրքական կառավարությունը ուշադրություն դարձրեց Սասունի վրա և ձեռնարկեց զորանոցներ կառուցելու գործը: Անդրանիկը կոչ էր անում սասունցիներին՝ բոլոր միջոցներով խափանել այն և ամբողջ Սասունը ոտքի կանգնեց. «Կամ բոլորս ալ կմեռնինք, կամ չենք ընդունիր, որ զորանոցներ շինվին» նշանաբանով: Այդ օրերին էր, որ Անդրանիկն իր զինակիցներով որոշեց պատժել Սերոբին դավադրաբար սպանած ավազակապետ Բշարե Խալիլին:

Հայոց ազատագրական շարժման պատմության մեջ առանցքային կարևորություն ունեն ֆիդայական գործողությունները՝ իրենց ուժականությամբ, իրենց ազդեցությամբ և նույնիսկ ապագա սերունդների վրա թողած տպավորությամբ: Ֆիդայական շարժումն անհրաժեշտ մի հանգրվան էր հայ ազատագրական պայքարի մեջ: Շատ մեծ թիվ են կազմում իրենց կյանքը զոհած, հայրենիքին նվիրված, համեստ ու անձնուրաց այն ֆիդայիները, որոնք տուն, տեղ ու ընտանիք թողած՝ հրացան առան, լեռները բարձրացան ու կեղեքված հայ գյուղացու պաշտպանության համար կռվեցին: Այս քաջերից շատերն ընկան կռվում՝ առանց իրենց մասին որևէ հիշատակ թողնելու:

Ֆիդայական շարժման կարևորությունն առաջին հերթին նրա բնույթն է՝ զինված պայքարը թշնամու դեմ: Ֆիդայիների սխրանքը երկնային շնորհ էր կեղեքված ու ստրկացած հայի համար: Ֆիդայական շարժումը բնական հաջորդ փուլն էր հայ ժողովրդի քաղաքական զարթոնքի և քաղաքական կուսակցությունների տարածած հեղափոխական գաղափարների: «Ազատություն կամ մահ» նշանաբանը նրանց աշխարհայացքն էր ու հավատամքը: Կյանքը, որքան էլ թանկ, արժեք չուներ, եթե ժողովուրդն ազատ չէր, ստրուկ էր իր հայրենիքում: Ժամանակն էր սթափվելու և ստրկության լուծը թոթափելու: Եվ հայ հեղափոխականը գիտեր, նրան հետևող ժողովուրդը գիտակցում էր՝ «միայն զենքով կա հայոց փրկություն»: Ֆիդային գիտակցել է, որ գաղափարի

հաղթանակը դյուրին չէ, գործ ու կյանք կարժենա: Եվ ֆիդային կռվի դաշտ է նետվում մոսին հրացանը գրկած, բայց մոսինից ավելի ազդու, ավելի ահարկու զենք է նրա հավատքը դեպի Սուրբ Գործը, նրա հույսը դեպի ապագան: Հայրենի հողը պիտի ծածկի մարմինը միայն. հոգին անմահ է, որովհետև Վարդանի սերունդը գիտակցաբար է մահ ընդունել: Կյանքն ի՞նչ է, եթե «մահ իմացյալը» նրան չպիտի պսակի անմահության փառքով: Ուրեմն՝

Կռվեցե՛ք տղերք, կռվեցեք քաջ, քաջ,
Անվեհեր կանգնած թշնամու առաջ,
Ցանկալի է մեզ միշտ ազնիվ մահը,
Հեռու մեզանից ոսոխին ահը[1]:

Ախլաթի շրջանում փրկարարի դեր ուներ Սերոբը: Նա կազմակերպել էր Ախլաթի, Բաղեշի ու Սասնա գյուղերը և ինքնապաշտպանության խմբեր ստեղծել: Հերոսական մարտերը թուրք և քուրդ մեծաթիվ զորքերի դեմ առասպելականացրել էին նրան: Ժողովուրդը այս մեծ հայրենասերին Աղբյուր Սերոբ է կոչել և բազմաթիվ երգեր հորինել նրա մասին: Սերոբի վարած մարտերում հաճախ իր կողքին կռվում էր նրա կինը՝ Սոսեն: 1899 թվականին 1500 հոգանոց թուրքական զորքի դեմ կռվելիս վիրավորվում ու մահանում է Սերոբը՝ իր 12 ֆիդայիներով[2]:

Հայդուկները որոշում են վրեժխնդիր լինել իրենց զոհված ընկերների համար: Նրանք, նախ, հաշվեհարդար են տեսնում Գեղաշենի մատնիչ Ավեի հետ, այնուհետև հետապնդում են Աղբյուր Սերոբի դահիճ խալիլին: Նրանք Անդրանիկի գլխավորությամբ կտրում են այն կիրճի բերանը, որով 13-14 զինյալների հետ պետք է անցներ Բշարե Խալիլը և Մուշից գնար Սասունի Աղբերիկ գյուղը: Չիլինկիրյանը նշում է. «խալիլ հեծած էր գորշ գրաստի մը վրա, գեղեցիկ էգ մը, որ բռնի առած էր Սասնո Կոբ գյուղի ռես խըջո Արեի ձեռքին»: Հայդուկների առաջին համազարկը շարքից հանում է Խալիլի ջոկատի անդամների մեծ մասին: Խալիլը կենդանի բռնվում է և բերվում Անդրանիկի մոտ: Հայդուկները կազմում են դատական ատյան և դատը վարում է Արթին Չավուշը, որը հիանալի քրդերեն գիտեր: Դատավորը Խալիլին հարց է տալիս. «Ուրեմն սպանված Սերոբի գլուխը կտրողը դու՞ն էս»: Այս հարցին հաջորդում է մյուսը. «Տալվորիկի Զբաղանք թաղին մեջ քսանյոթը հայ կիներն ու փոքրիկները, նույնպես գյուղին 75 տարեկան ծերունի Տ.

[1] Փիրումյան Ռ, Հայկական հարցի պատմություն, Երևան, 2002, էջ 125:
[2] Հայ ժողովրդի պատմություն, հ. 6, Երևան, 1981, էջ 187:

Պետրոս քահանան սպանողը դու՞ն էս»: Այնուհետև Բշարե Խալիլին տրվում է վերջին հարցը. «Հերթինք գյուղի յոթը հայ երիտասարդները բռնող և թևերը կապած նըռնա գոմին ներքև՝ գետի մեջ սպանողը դու՞ն էս»[3]: Այս ասելուց հետո հայ ֆիդայիները կտրում են նրա գլուխը, անցկացնում ցցին և պտտեցնում Սասունի Տավրնե գյուղում:

Այս դեպքից հետո էր, որ ժողովուրդը սկսեց երգել գուսան Շերամի Անդրանիկի մասին հյուսված հետևյալ երգը.

Իբրև արծիվ սավառնում ես լեռ ու ժայռ,
Թնդացնում ես երկինք երկիր անդադար,
Քաջ անունդ պիտի հիշվի դարեդար,
Հսկա լեռինք քեզ ապավեն Անդրանիկ:

Հայոց կուսանք դափնյա պսակ թող հյուսեն,
Քնքույշ ձեռամբ քո ճակատը պսակեն,
Գոհարներով քո քաջ կուրծքը զարդարեն
Հայրենիքի տեր ու պաշտպան Անդրանիկ:

1901թ. նոյեմբերին Անդրանիկի և Գևորգ Չավուշի գլխավորությամբ 25 ֆիդայիներ իջնում են Սասունի լեռներից և ամրանում Մշո ս. Առաքելոց վանքում: Հետագայում Անդրանիկի պատմածի հիման վրա Առաքելոց վանքի դեպքերի մասին գրի առնվեց ու հրատարակվեց մի փոքրիկ, բայց իրական փաստերը ճիշտ նկարագրող գրքույկ[4]:

1901թ. նոյեմբերին, երբ Անդրանիկն ամրացավ Առաքելոց վանքում, թուրքական իշխանությունները ցանկացան հենց սկզբից վանքը ռմբակոծել թնդանոթներով, սակայն. «Ռուսիո հյուպատոսը առարկած է կառավարության, թե այդ վանքին մեջ որբեր կան և անոնք անմեղ են»: Վանքը ուներ այնտեղ եղածների համար մեկ ամսվա սննդի պաշար: Որպեսզի ապահովեն իրենց ջրով, հայդուկները սկսում են ջրով լցնել բոլոր ջրամանները, գինու կարասները, մատաղի կաթսաները:

[3] Ռուբեն հայ Յողափոխականի մը յիշատակները, Թեհրան 1982. Հ. Յ.
[4] Նույն տեղում, էջ 15:

Շուտով նրանց են միանում Մշո դաշտից ժամանած նոր երիտասարդներ իրենց ռազմամթերքով և խմբի թիվը հասնում է 80 հոգու: Սկսվեց թուրքական ուժերի և հայդուկների կռիվը, որը տևեց 21 օր : Մի քանի օր հետո թուրքական բանակի հրամանատարը սկսեց համոզել պաշարվածներին՝ անձնատուր լինել: Սակայն հայդուկները մերժեցին նրա առաջարկը: Դրությունը օրհասական էր: Հայկական փոքրաթիվ այդ ջոկատը ուժերի գերլարումով էր դիմադրում թշնամուն: Թուրքական բանակի թիվը ուսումնասիրողները հասցնում են 800 հոգու, չհաշված քրդական ուժերին: Սուլթանական կառավարությունը հրամայեց վերջ տալ հայդուկների դիմադրությանը և գրավել վանքը: Անդրանիկի գլխավորած հայդուկները ներկայացնում են հետևյալ պահանջները.

- ✓ ազատել քաղաքական բոլոր բանտարկյալներին,
- ✓ յուրաքանչյուր գյուղի տասանորդը պետք է հավաքի հենց ինքը գյուղացին և հանձնի կառավարությանը,
- ✓ ջնջել քուրդ ցեղապետների հարկերը, որոնք հավաքվում են հայ գյուղացիներից, քանի որ պետության մեջ պետություն չպետք է լինի,
- ✓ զինաթափ անել այն քրդական զավթիչ ուժերին, որոնք հարձակվում են խաղաղ հայ գյուղերի վրա,
- ✓ վերադարձնել հայ գյուղացիներից բռնագրավված հողերը:

Բանակցությունների վերջում հայդուկները պահանջում են ընդունել այդ առաջարկությունները, որից հետո միայն իրենք կթողնեն վանքը և կհեռանան: Ինչ վերաբերվում է անձնատուր լինելուն, ապա նրանք չեն մտածում այդ մասին և ցույց տալով ռազմամթերքներով լիքը սնդուկները, Անդրանիկը բանակցելու համար վանք մտած թուրք աստիճանավորներին ասում է. «Մենք մահը աչք առնելով ֆիդայի դարձած ենք և հետևաբար մահեն չենք վախենար, այս սնդուկներուն մեջ որքան փամփուշտ կա՝ կը վառենք ու ապա կնահատակվինք, բայց գիտցեք, որ մեկ նահատակի տեղ տասը և հարյուր հերոսներ ոտքի պիտի կանգնին և հայ ժողովուրդի իրավունքները պաշտպանեն…»[5]:

Խորհրդային ժամանակաշրջանում տասնամյակներ շարունակ մեզ պարտադրված՝ «Հայ ազգը ամբողջովին բնաջնջվեց իր պատմական հայրենիքում» տողերը, ցավոք, շարունակում են տեղ գտնել պատմության դասագրքերում նաև Հայաստանի անկախացումից հետո: Սա գուցե բնական է այն պարագայում, երբ 70 տարի շարունակ արհեստականորեն մեկուսացված ու որոշակի

[5] Ռուբեն հայ Յողափոխականի մը յիշատակները, Թեհրան 1982. Հ. Յ. էջ130:

շրջանակներում սահմանափակված հասարակությունը Արևմտյան Հայաստանում տեղի ունեցող իրադարձություններից ո՛չ գաղափար ուներ, ո՛չ էլ ուսումնասիրելու հնարավորություն:

Հայերը այս քաղաքականության զոհն են դարձել հավասարապես և՛ Արևելյան, և՛ Արևմտյան Հայաստաններում: Մինչ Արևելյան Հայաստանում խորհրդային կառավարությունը քարոզում էր մոռանալ անցյալը, աքսորում և նույնիսկ գնդակահարում էր հայրենիքի մասին անգամ երգեր երգողներին, Արևմտյան Հայաստանում կրկնակի կոտորածների, իրավազրկումների, խտրականության ու ամեն կողմից մեկուսացման ենթարկվող հայերը չէին էլ համարձակվում մտածել, թե ինչ եղան սահմանից այն կողմ գաղթած իրենց ազգականները:

Անկախացումից հետո Հայաստանի բոլոր ջանքերն ուղղված էին ավելի շատ եղածը որպես ցեղասպանություն ապացուցելուն, ինչը շատ բնական էր, և այս ընթացքում պարզապես չհասցրինք մտածել Արևմտյան Հայաստանում մնացածների մասին, մանավանդ որ երկար ժամանակ դեռ համոզված էինք, որ բոլորը «ջնջվել են», ինչպես սովորեցնում էին խորհրդային դասագրքերը: Դե, իսկ սփյուռքի տարբեր գաղթօջախներում ջանքերն ուղղված էին հայապահպանությանը և ցեղասպանված ազգի բեկորները ոտքի կանգնեցնելուն, իրենց լեզվի և մշակույթի պահպանման ջանքերի հետ մեկտեղ խնդիր ունեին անցյալի վերքերը նորոգելու, ու դեպի Թուրքիա հայացք գցելը չափազանց դժվար խնդիր էր երկար տարիներ:

Ցավոք, ժամանակն աշխատել է ի վնաս մեզ: Այժմ Արևմտյան Հայաստանի և այնտեղ մնացած հայերի մասին ուսումնասիրություն կատարելը թեև ավելի դյուրին է դարձել, սակայն այսքան ժամանակ անց շատ քիչ են մնացել բուն հիշողության կրողները, ովքեր մեզ պիտի ժառանգեին այն, ինչը բաց ենք թողել 100 տարվա ընթացքում:

Անդրանիկի ըմբռնմամբ, առանձնահատուկ ապագա չկար: Նրա համար ամեն վաղվա օրը ապագա էր: Ապագա էր յուրաքանչյուր օրվա երկրորդ կեսը: Որովհետև այնպես չէր կարծում, թե պետք է նստել ու սպասել, թե երբ կբացվի ժողովրդի լուսավոր առավոտը: Սա ոչ շտապողականությունն է, ոչ էլ հապճեպությունը: Պարզապես նա դեմ էր այսօրվանը վաղվան գցելուն, մտածելով, որ վաղը կարող է ուշ լինել:

Առաքելոց վանքի ծուղակից դուրս գալուց հետո Անդրանիկը խոր թաքստոց է մտել, որը այս դեպքում սովորական ընդհատակը չէ: Պարզապես նա խուսափել է ուղղակիորեն իշխանությունների մարդկանց հետ հանդիպելուց, իսկ մնացած դեպքերում զննել է, թե զրուցակիցը, նա՛, ում տանը որ գիշերել է, հուսալի մարդ է թե ոչ, չի՞ կարող արդյոք պատահել, որ մատնիչ է և նրանց հանդիպումն իր հետ ոչ թե պատահական է, այլ մտածված ու կազմակերպված: Մյուս

դեպքերում նա շրջել է գյուղերում, հանդիպել մարդկանց և մի միտք է ամենուր տարածել, կռվին վերջ չկա, այսուհետև ավելի շատ մարդիկ պետք է զենքի տակ հավաքել, ուրեմն, ավելի շատ պետք է հոգալ զենք ձեռք բերելու մասին և ոչ թե առանձնապես պատրաստվել մի որևէ անակնկալի, այլ միշտ և ամեն դեպքում կազմ ու պատրաստ լինել կռվի մեջ մտնելու: Որովհետև կռիվը ոչ պատվերով է, ոչ էլ հստակ ու ճշգրիտ նախատեսված ժամանակի ու տարածության մեջ: Այդպես էլ, ոչ որոշակի դադարի, ոչ էլ արյունահեղ մարտերի միջով անցավ 1902 թվականը: Այս ընթացքում Անդրանիկը քարոզիչ էր, վերլուծող ու կազմակերպիչ, ուժեր հավաքագրող և գումարող, թեև քիչ ժամանակ չէր տրամադրում նաև զենք ձեռք բերելուն, նորապսակ հայդուկներին զինելուն և վարժեցնելուն[6]:

Արևմտյան Հայաստանում ստեղծվել էր ինքնապաշտպանության գործը կազմակերպող ղեկավար կենտրոն: Այդ կենտրոնի մեջ մտնում էին Վարդգեսը՝ Վասպուրականի շրջանում, Ռուբեն Շիշմանյանը՝ Կարինի շրջանում և Վահան Տողրամաճյանը՝ Տարոն-Սասունի շրջանում:

Սակայն շարժման փաստական ղեկավարը փորձառու հայդուկ Արմենակ Ղազարյանն էր (Հրայր, Դժոխք): Նրա գործունեությունն ընդգրկում էր Տարոնի հայ հասարակական կյանքի բոլոր ոլորտները՝ ժողովրդական կրթության, ինքնապաշտպանության, տնտեսական -հասարակական նախաձեռնության կազմակերպման և այլն: Հրայրի կարծիքով համբերելն ու տոկալն ևս նույնքան անհրաժեշտ զենքեր են, որքան հարկ եղած պարագային զենքով կռվելը և արյուն թափելը: Նա գտնում էր, որ անհրաժեշտ է նախապատրաստվել հանդարտ ու համառ աշխատանքով, խուսափել ընդհարումներից և առիթ չտալ պրովոկացիաների:

1903 թվականի վերջերին Կովկասից Սասուն էր հասել Թորգոմի 27 հոգուց բաղկացած զինված խումբը: Այդ առիթով Տարոնի ինքնապաշտպանության ղեկավարությունը Գելիեզուզանում ժողովի էր հրավիրել զինված խմբերի ղեկավարներին և Սասունի գյուղերի ավագներին: Ժողովը որոշեց եղած փոքրաքանակ զենքերը բաժանել գյուղերի վրա: Միայն Գելիեզուզանն ստացավ 70 հրացան, իսկ մյուս գյուղերն ավելի քիչ: Ընտրվեց ինքնապաշտպանության զինվորական խորհուրդ՝ Անդրանիկի գլխավորությամբ:

1904թ. հունիսի 26-ին սահմանն անցնում է հնչակյանների «Արծիվ» հայդուկային խումբը Բաբկենի ղեկավարությամբ:

---

[6] Կարապետյան Հ., Անդրանիկ, Երևան 1992, էջ 101:

Գլուխ 2. Սասունի ապստամբության սկիզբը: Ինքնապաշտպանական ուժերի կազմակերպումը

XIX դ. երկրորդ կեսին հայ ազգային-ազատագրական շարժումների վերելքը և XX դարասկզբին տեղ գտած հակացարական ելույթները ոտքի հանեցին նաև սուլթանական տիրապետության դեմ մաքառող արևմտահայությանը: Ազգային-ազատագրական այդ փուլի նշանավոր դրվագներից էր Սասունի 1904թ. ինքնապաշտպանությունը, որին աջակցելու գործում անմասն չմնաց նաև Բաքվի բովանդակ հայությունը: Դեռևս 1903թ. աշնանը Սասունի, Գելիեգուզանի, Ռշկանի բարձունքներում ինքնապաշտպանության ղեկավարներ Հրայրի, Անդրանիկի, Թորգոմի, Սեպուհի և ուրիշների մասնակցությամբ հրավիրված ժողովում քննության էր առնվել գոյամարտի պլանը, ստեղծվել զինվորական խորհուրդ, իսկ գոյամարտի ընդհանուր հրամանատարությունը դրվել էր Անդրանիկի վրա: Ժողովի առաջարկությամբ, Թորգոմը և Կայծակ Վաղարշակը մեկնեցին Անդրկովկաս՝ զենք բերելու նպատակով[7]: Սասունի ազատասեր բնակիչները, այլևս չհանդուրժելով թուրքական ու քրդական հարստահարիչների կամայականությունները, 1904թ. մարտին բարձրացրեցին ապստամբության դրոշը և սկսեցին անհավասար կռիվ մղել թուրքական ու քրդական հրոսակախմբերի դեմ: Միաժամանակ, Սուլթան Աբդուլ Համիդը որոշել էր Սասունը դատարկել հայերից՝ նրանց բնաջնջելու միջոցով. դա, բնականաբար, ոտքի հանեց սասունցիներին: Մարտ-ապրիլ ամիսներին Սասնա սարերը դառնում են պատերազմական գործողությունների թատերաբեմ:

Սասունցիների պաշտպանությամբ հանդես չեկան մեծ տերությունները: Մասնավորապես Ռուսաստանը, տագնապած Անդրկովկասի հեղափոխական շարժումների վերելքից, շահագրգռված էր Արևմտյան Հայաստանում հանգստություն և կարգ ու կանոն պահպանելու մեջ:

Ուստի ցարական կառավարությունը բոլոր միջոցներով խոչընդոտում էր կովկասահայերի կողմից Սասունին որևէ օգնություն ցույց տալուն՝ հատկապես արգելելով նրանց անցնել Արևմտյան Հայաստան[8]: 1904թ. փետրվարի 25-ին՝ Սասունի գոյամարտի նախօրյակին, Էրզրումի գլխավոր հյուպատոս Ն. Սկրյաբինը Կ. Պոլսում Ռուսաստանի դեսպանին ու Կովկասի կառավարչապետին հայտնում էր, որ, իր ստացած տեղեկությունների համաձայն, Անդրկովկասում հավաքվել են մոտ 2000 հայեր, որոնք գարնանը մտնելու են Թուրքիա՝ սասունցիներին օգնելու նպատակով, ուստի

[7] Համբարյան Ա., Սասունի 1904 թվականի գոյամարտը, 1989թ., N 4, էջ 24:

[8] Համբարյան Ա., Ազատագրական շարժումները Արևմտյան Հայաստանում (1898-1908թթ.), Ե., 1999, էջ 225:

անհրաժեշտ էր համարում, որ ռուսական սահմանապահ ջոկատները խստորեն հետևեն հայերին և թույլ չտան սահմանն անցնել:

1904թ. մարտին Սասուն մեկնող Թորգոմի և որսորդ Գևորգի 61 հոգուց բաղկացած «Որսկան» հայդուկային երկրորդ ջոկատի կազմում ընդգրկվել էին մի շարք մտավորականներ, բժիշկներ, ուսանողներ և քահանաներ: Խմբի կազմում էր նաև Բաքվի հայ հարուստ ընտանիքներից մեկի՝ Հայրապետ Քալանթարյանի որդին՝ ՀՅԴ անդամ Լևոն Քալանթարյանը[9]: Օլթիի շրջանում, սահմանն անցնելուց հետո, խումբը մարտի է բռնվում ռուսական սահմանապահ զորամասերի հետ: Հակառակ կողմից էլ կրակ են բացում թուրքերը:

ՀՅԴ մարտիկներին հաջողվել էր զանազան վայրերում կազմակերպել մեծ ու փոքր խմբակներ, որոնք Հյուսիսային Կովկասից և Ռուսաստանի խորքերից գաղտնի ճանապարհներով զենք ու զինամթերք էին փոխադրում Բաքու: Այդտեղ հայ գործարանատիրոջ արհեստանոցներից մեկում պատրաստվում էին նաև պայթուցիկ ռումբեր, որոնք զենքի և զինամթերքի հետ տեղափոխվում էին սահմանագլուխներ: Բաքվի հայերն իրենց աջակցությունը ցուցաբերեցին նաև նյութապես: Հայրենանվեր այդ գործում անմասն չմնացին Բաքվի հայ կանայք: Նրանցից ստեղծված խմբերը «Երկիր» գնացող հայդուկների համար պատրաստում էին ձեռագործներ և այլն:

Եգոր Առուստամյանը ապահովել է նաև 1903թ. հուլիսին Թորգոմի 23-հոգանոց «Մրրիկ» հեծելախմբի անցումը Սասուն:

Արևմտյան Հայաստան մեկնող հայդուկային և զինատար խմբերում ներգրավվել էին Բաքվի հասարակական գրեթե բոլոր շերտերի ներկայացուցիչները:

Բաքվում այդ օրերին Սասունի ինքնապաշտպաններին օգնության հասնելու գործի գլխավոր կազմակերպիչներից էր անվեհեր հայդուկ Նիկոլ Դումանը (Նիկողայոս Տեր-Հովհաննիսյան), որին և հանձնարարվում է դաշնակցական Խեչոյի և փորձված մի քանի զինվորների հետ մեկնել Սասուն: Նիկոլ Դումանին Սասուն ուղարկելը բնավ պատահական չէր: Դաշնակցությունը համոզված էր, որ Դումանի հեղինակությունն ու ռազմավարական տաղանդը շատ օգտակար կլինեին Սասունում

[9] Նույն տեղում:

Գլուխ 3. Սասունի ապստամբության ընթացքը

1904թ. Սասունի ապստամբությունը առանձնահատուկ տեղ է գրավում 19-րդ դարի վերջի և 20-րդ դարի սկզբի հայ ժողովրդի ազգային-ազատագրական պայքարում: Կարելի է աներկբա պնդել, որ իր ծավալով, ընդգրկումով, հետևանքներով և մանավանդ ձեռք բերած ժողովրդականությամբ ու հնչեղությամբ Սասունի ապստամբությունը Հ.Յ.Դ-ի կողմից Երկրում կենսագործած ամենանշանակալի և ծավալուն մարտական գործողությունն է: Եթե գնահատենք Սասունի ապստամբությունն իր ամողջականությամբ ու հետևանքներով, ապա ի թիվս այլ հարցերի պիտի պատասխանել նաև հետևյալների.

1. Ի՞նչու և ինչպիսի՞ հանգամանքներում կազմակերպվեց Սասունի ապստամբությունը:
2. Հնարավո՞ր էր խուսափել ապստամբությունը սկսելուց և այն ձեռնարկել՝ սպասելով առավել հասունացած նախադրյալների ու նպաստավոր պայմանների:
3. Ազատագրական պայքարին բերած նպաստները և հետևանքները:

1894թ. Սասունի ինքնապաշտպանությունն ու 1904թ. ապստամբությունը, որը նույնպես վերածվեց ինքնապաշտպանության, ունեին իրենց որակական առանձնահատկությունները և էապես տարբերվում են միմյանցից:

1894թ. տեղի ունեցած դեպքերի ժամանակ, որը բացառապես ինքնապաշտպանական բնույթ ուներ, օսմանյան տերության դեմ պայքարի դրոշ պարզած սասունցիները իրենց գործողություններում առաջնորդվել են Սասունի առաջնորդների կամքով ու որոշումներով, թեպետ այնտեղ էր հնչակյան Մեծ Մուրադը:

1904թ. Սասունի ապստամբությունը, կազմակերպվել է Հ.Յ.Դ-ի գործուն մասնակցությամբ և ապստամբության հետ կապված բոլոր խնդիրները հիմնականում լուծվել են ՀՅԴ «Դուրան-Բարձրավանդակ» Կենտրոնական կոմիտեի ու այնտեղ գործող ֆիդայիների որոշմամբ: Մինչև ապստամբություն սկսելը, Հրայր Դժոխքը իր ղեկավարության տարիներին կարողացավ խոհեմ, հավասարակշռված գործելակերպով Սասունն ու Դաշտը, հարաբերական իմաստով, զերծ պահել թուրք և քուրդ հրոսակների ոտնձգություններից: Դուրան-Բարձրավանդակի հայ բնակչությունն այդ տարիներին ապրում էր համեմատաբար խաղաղ պայմաններում: Ապստամբության կազմակերպման վերաբերյալ ՀՅԴ Դուրան-Բարձրավանդակ Կենտրոնական կոմիտեի անդամները պաշտպանում էին հակոտնյա տեսակետներ, որոնք պայմանավորված էին հիմնականում հետևյալ խնդիրներով.

1. Ապստամբություն սկսելու ժամկետները:

2. Ապստամբությանը մասնակցող, նրա մեջ ընդգրկվող շրջանները:

ՀՅԴ Դուրան-Բարձրավանդակի գործիչների մի մասը Անդրանիկի գլխավորությամբ կողմնակից էր ապստամբության բարձրացմանը: Համաձայն նրանց առաջարկած ծրագրի, պիտի ապստամբեին ու Սասունին արձագանքեին ոչ միայն Դուրան-Բարձրավանդակի, այլ նաև Բիթլիսի նահանգի մյուս շրջաններն ու նաև Վասպուրականը: Նրանք գտնում էին, որ եթե ընդարձակվի ապստամբություն բարձրացրած շրջանների շրջանակները, ապա հակառակորդը հարկադրված կլինի իր ուժերը ցրել ավելի մեծ ճակատի վրա, և «Այսպիսով հույս կար, թե դիմադրութիւնը կարելի պիտի ըլլա ոչ միայն դյուրացնել, այլ նաեւ երկարաձգել»:

Անդրանիկը մասնակցել է 1903թ. Գելիեգուզանի մերձակա Ռըշկներ կոչված վայրում տեղի ունեցած ժողովին և հետևաբար տեղյակ էր, որ ժողովում որոշվում է տալվորիկցիներին հանձնել ընդամենը 30, գելիեգուզանցիներին 70, իսկ մյուս գյուղերին ավելի քիչ քանակության զենք: Այսինքն, այդ ժողովը մեկ անգամ ևս փաստում է, որ ՀՅԴ Դուրան-Բարձրավանդակ Կենտրոնական կոմիտեն հայ բնակչությանը կարող էր տրամադրել խիստ սահմանափակ քանակությամբ զենք ու զինամթերք: Ամենայն հավանականությամբ այս տեսակետը պաշտպանողներն առաջնորդվել են հայդուկային-պարտիզանական կռիվներ մղելու մարտավարությամբ և այնքան էլ հաշվի չեն առել ու արժևորել ապստամբության և հայդուկային-պարտիզանական կռիվների առանձնահատկություններն ու տարբերությունը և նրանցից բխող հետևանքները:

Սթափ գնահատելով ժամանակաշրջանի յուրահատկությունները, Երկրում և մասնավորապես Դուրան-Բարձրավանդակում գործող ՀՅԴ կառույցների, մարտական ուժերի իրական ուժն ու հնարավորությունները, ինչպես նաև ժողովրդի կազմակերպվածությունն ու տրամադրվածութունը, Հրայրը պահանջում է հանգիստ թողնել ու չվտանգել Դուրան-Բարձրավանդակի մյուս շրջանները և շարժումը սահմանափակել միմիայն Սասունով: Կարելի է պնդել, որ շնորհիվ Հրայրի հեղինակության, խոհեմ ու կշռադատված գործ ելակերպի Դուրան-Բարձրավանդակի մյուս շրջանները չմասնակցեցին կռիվներին և դրանով իսկ զերծ մնացին անխուսափելի կոտորածներից:

1904թ. հունվար-փետրվար ամիսներին տեղի է ունենում ՀՅԴ 3-րդ Ընդհանուր Ժողովը, որն իրավասու էր վերջնականապես վճռելու ապստամբության հետ կապված խնդիրները: Հայության համար այդ կարևորագույն նշանակություն ունեցող հարցը քննարկելու և համապատասխան որոշում կայացնելու համար Ընդհանուր Ժողովի պատգամավորները, բնականաբար, նախ

պարտավոր էին լսել և հաշվի առնել ապստամբության կազմակերպմանը վերաբերող Բարձրավանդակի կարծիքն ու առաջարկությունները:

Ապստամբության կազմակերպիչները հաշվի չէին առել մի կարևորագույն գործոն ևս. ցարական իշխանությունների դիրքորոշումն ու վերաբերմունքը հայ ազգային-ազատագրական պայքարի նկատմամբ: Ժամանակը ցույց տվեց, որ Սասուն մեկնող մարտական խմբերի ճանապարհին կանգնած ամենագլխավոր արգելապատնեշներից մեկը հենց ռուս սահմանապահ զորքերն էին, որոնց բախվելով ջախջախվում էին հայ մարտական ուժերը:

1904թ. հունվարի սկզբներին թուրքական կանոնավոր բանակի զորամասերն ու նրանց աջակցող քրդական հրոսակախմբերը, կենտրոնանալով Դաշտում, աստիճանաբար սկսում են պաշարել լեռնաշխարհը: Թուրք իշխանությունները շատ ճիշտ են ընտրում Սասունի վրա հարձակվելու և այն հիմնահատակ կործանելու հարմար պահը: 1904թ. բռնկված ռուս-ճապոնական պատերազմը, Երկիր մեկնող հայ հեղափոխական գործիչների, մարտական ուժերի նկատմամբ ցարական իշխանությունների դրսևորած թշնամական վերաբերմունքը, ինչպես նաև Հայ Դատի հանդեպ արևմտյան տերությունների որդեգրած երկդիմի քաղաքականությունը, թուրք կառավարությանը հրաշալի հնարավորություն է ընձեռում՝ ոչնչացնելու Հ.Յ. Դաշնակցության կողմից հեղափոխական մարտական ուժերի կենտրոնացման վայր ընտրված Սասունը:

Լեռնաշխարհի ինքնապաշտպանությունը հուսալիորեն կազմակերպելու համար բազում կարևոր հարցերի շարքում պետք է լուծվեր ևս մեկը. ո՞վ պետք է առաջնորդեր Սասունի մարտական ուժերը: Գաղտնիք չէ, որ Սասունում գտնվողներից և ոչ մեկը իր հերոսական անցյալով և մարտական հարուստ կենսափորձով չէր կարող համեմատվել Գևորգ Չավուշի հետ, և միանգամայն բնական է, որ ժողովուրդն ու ֆիդայիների մեծ մասը հենց նրան էին ցանկանում ընտրել հրամանատար:

Լեռնականների շրջանում արդեն մեծ հեղինակություն էր ձեռք բերել նաև Սեբաստացի Մուրադը: Թեև Սասունի փաստական առաջնորդը, անտարակույս, Հրայրն էր, բայց տվյալ պահին, որպես մարտական ուժերի հրամանատարի գլխավոր թեկնածուներ, համարվում էին Գևորգ Չավուշը, Անդրանիկն ու Մուրադը[10]:

[10] Տարոնեան Է., Արիւնոտ եւ Արեւոտ էջեր, էջ 25:

Գլուխ 4. Սասունի ապստամբության պարտությունը և հետևանքները

Սասունի դեպքերը լուսաբանող սկզբնաղբյուրների ուսումնասիրությունը միանշանակորեն մատնանշում է, որ ապստամբության կազմակերպիչներն ու պատասխանատուները ի սկզբանե առանձնապես մեծ հույսեր չեն փայփայել հաղթանակի նկատմամբ: Այլ տարբերակ լինել չէր կարող: Ի՞նչ ուժերով և ինչքան կարող էին ընդամենը մի քանի հարյուր ազատամարտիկներ դիմագրավել թնդանոթներով զինված թուրքական կանոնավոր բանակին և նրանց սատարող տասնյակ հազարավոր քուրդ զինյալներին:

Հարց է ծագում. եթե իրոք Սասունը չուներ պաշտպանվելու բավարար միջոցներ, ապա ինչու՞ չէր ընդունում զենքը վայր դնելու առաջարկությունը: Վահանի վկայությամբ հայ բանագնացների մեջ էլ եղել են մարդիկ, որոնք դեմ լինելով զինված հակամարտությանը, փորձել են համոզել Սասունի առաջնորդներին, որպեսզի նրանք ընդունեին թուրքերի վերջնագիրն ու վերջ տային զինված ելույթներին:

Թուրք հրամանատարությունը Սասունի պաշտպաններին ապակողմնորոշելու նպատակով գրոհը զարգացնում է երկու ուղղությամբ, որոնցից մեկը զուտ ցուցադրական, ուշադրությունը շեղող բնույթ ուներ: Գլխավորը Շենիք-Սեմալ ուղղությունն էր, ուր կենտրոնանում է կանոնավոր զորամասերի և քրդական հրոսակախմբերի մեծ մասը:

Թուրքակական զորքերը տարբեր ուղղություններով ներխուժում են Սեմալ: Կատաղի ճակատամարտ է ծավալվում թնդանոթների կրակի ուղեկցությամբ գյուղի վրա հարձակվող թուրքական կանոնավոր զորամասերի, բազմահազար քուրդ զինյալների և նրանց դիմակայող փոքրաքանակ հայ մարտիկների միջև: Սեմալի պաշտպանները դիմագրավելով թշնամու անընդմեջ գրոհները, կարողանում են կասեցնել հակառակորդի առաջխաղացումը ու պահել դիրքերը:

Ինքնապաշտպանական ուժերը ունենում են թերևս ամենաթանկագին և ամենացավալի զոհը. «Գլուխն, - նշում է Վահանը, - գնդակի հարուած մը ընդունելով Կէլիէկուզանի եւ Սեմալի մեջեւ կսպանուի մեր անփոխարինելի ընկերը, յեղափոխութեան անվհատ առաքեալը՝ պ. Հրայր (Արմենակ Ղազարեան-Դժոխք, Ղըզըլաղաճ գիւղացի Մշոյի)»:

Հրայրի զոհվելը և Սեպուհի վիրավորվելը, անտարակույս, կարող էր խուճապ սերմանել հայ մարտիկների շարքերում: Այդ նույն պահին Անդրանիկը գտնվում էր ճակատի կենտրոնական հատվածում և քանի որ նա նույնպես մարտնչում էր ծանրագույն իրավիճակում, չէր կարող թողնել պաշտպանական այդ հատվածն ու մեկնել Սեմալ-Շենիկ ուղղություն:

Թուրք հրամանատարությունը, լեռնականների պաշտպանական ճակատը ճեղքելու և Գելիեգուզան ներխուժելու նպատակով, գրոհ է ձեռնարկում նաև Չայի ուղղությամբ, բայց հանդիպելով Մուրադի գլխավորած մարտիկների դիմադրությանը և կրելով զգալի կորուստներ, դադարեցնում է առաջխաղացումը[11]:

Քանի որ մարտական ուժերի խիստ սահմանափակության պատճառով հակառակորդի լայնածավալ հարձակումների դեպքում անհնարին կլիներ պաշտպանել զգալի երկարությամբ ձգվող պաշտպանական բնագծերը, Սասունի ռազմական խորհուրդը որոշում է ուժերը կենտրոնացնել ավելի փոքր տարածքի վրա: Այդ նկատառումով այրում են գյուղերը ու մարտական ուժերը տեղափոխում Գելիեգուզան:

Իրենց հետագա անելիքները որոշակիացնելու նպատակով Անդրանիկը ապրիլի 21-ին Ալուճակ գյուղում խորհրդակցություն է հրավիրումԻ դեպ, Սասունի ընդհանուր մատակարար Քեռին զինամթերքի ու սննդամթերքի պաշարների սպառման մասին զինվորական խորհրդի անդամներին հայտնել էր դեռևս խորհրդակցության նախօրեին: Հաշվի առնելով այդ իրողությունը, խորհրդակցությունում որոշվում է ժողովրդին իջեցնել Դաշտ:

Սեբաստցի Մուրադը իր զինակիցներով կատարում է առաջադրանքը: Հազարավոր հայեր դժվարանցանելի լեռներով ու ձորերով տեղափոխվում են Դաշտի գյուղերը:

Իրենց հետագա գործողությունները որոշելու նպատակով Սասունի առաջնորդները Մառնիկա սարի բարձունքում գումարում են իրենց վերջին խորհրդաժողովը: Համաձայն Սմբատի վկայության, խորհրդաժողովի 80 մասնակիցների մեջ տիրել է երկու տեսակետ: Առաջին տեսակետի համաձայն, որը պաշտպանել են ՀՅԴ Մուշի Կենտրոնական կոմիտեն, մարտախմբերը պետք է ցրվեին, իսկ Անդրանիկը. «...ինքն ալ ապաստանի Մուշի ռուսական հյուպատոսարանը, ուր իրեն թաքստոց մը պատրաստված էր»»:

Երկրորդ տեսակետը պաշտպանողները, Անդրանիկի գլխավորությամբ, նույնպես համամիտ են եղել մարտախմբերը ցրելու առաջարկությանը, բայց պահանջել են, որպեսզի կուսակցական և ազգային մարմինները թուրք իշխանությունների հետ վարեին անհրաժեշտ բանակցություններ: Իսկ ռուսական հյուպատոսարանում պատսպարվելու Անդրանիկին արած առաջարկությունը մերժվում է: Ավելին, Անդրանիկն առաջարկում է. «...Գեւորգն ու ես դաշտ իջնենք, հաւաքենք ու Մարնկայ սարը փոխադրենք որք ան մարդ ու զենք որ կրնանք ու գրոհ տանք թշնամիի վրայ»[12]:

---

[11] «Դրօշակ», 1905, թիւ 2, էջ 20:

[12] Թադևոսյան Ռ., Դրվագներ հայոց ռազմական պատմությունից,XIX-XX դարեր, Երևան 2012, էջ 133-136:

Հրայրը ժամանակին զգուշացրել ու պահանջել էր, որ չպետք է կռիվների մեջ ներգրավեին Դաշտի գյուղերը և դրանով իսկ վտանգեին այդ շրջանների հայությանը: Իրականում ի՞նչ արդյունավետ, հայանպաստ գործ կարող էին անել սահմանափակ քանակության զինամթերք ունեցող, ընդամենը 120, իսկ ըստ Անդրանիկի 140 ֆիդայիներ ընդդեմ թուրքական կանոնավոր զորավաշտերի ու քրդական հրոսակախմբերի:

Օգոստոսի 13-ին տեղի ունեցած Շամիրամի կռվում հայ մարտիկները մարտնչում են մինչև մութն ընկնելը, ապա ճեղքում պաշարման շղթան և Աղբյուր Սերոբի զինակից Տելեմակի (Դանիել Տեր-Հովհաննիսյան) աջակցությամբ տեղափոխվում են Ախլաթ, ապա անցնում Աղթամար:

Խորհրդաժողովի ավարտից հետո, Գևորգ Չավուշն ու Կորյունը 17 ֆիդայիներով թողնում են Աղթամար կղզին և մեկնում Ախլաթ, ապա անցնում Սասուն: Հաջորդ օրը, առավոտյան երեք առագաստանավով, մեկ շոգեմակույկով Աղթամարին են մոտենում թուրք զինվորները: Կղզին գրավելու թուրքերի ձեռնարկած բոլոր փորձերն ապարդյուն են անցնում: Ֆիդայիները կարողանում են դիպուկ հարվածներով խափանել հակառակորդի բոլոր հարձակումները: Թեև թուրքերին չի հաջողվում կղզին գրավել և հաշվեհարդար տեսնել ֆիդայիների հետ, բայց այնտեղ նրանց մնալը ոչ միայն աննպատակահարմար էր, այլև անհնար: Ֆիդայիների մի մասը, թողնելով կղզին, ուղևորվում է Լեռնապար, իսկ մյուսները՝ Վան:

Վանում մնալն անիմաստ էր ու նաև չափազանց վտանգավոր: Գործին միջամտում է նույնիսկ Վանի նահանգապետը՝ պահանջելով խմբին անմիջապես հեռանալ Վասպուրականի տարածքից, ընդսմին՝ խոստանալով սահմանն անցնելու անվտանգությունը: Ֆիդայիները Վանից անցնում են Պարսկաստան, հյուրընկալվում Խոյի և Սալմաստի հայությանը, ապա մի քանի քանի օր հետո հեռանում են նաև Պարսկաստանից[13]

[13] Համբարյան Ա., Ազատագրական շարժումները Արևմտյան Հայաստանում(1898-1908թթ), Երևան 1989, էջ 223:

Եզրակացություն

Այսպիսով, անտարակույս Օսմանյան կայսրության դեմ պայքարի դրոշ պարզած սասունցիներն ու նրանց զինակցությամբ մարտնչող հայդուկները, օգնության շտապող մարտական ու զինատար խմբերը հերթական անգամ դրսևորեցին հերոսականության հիասքանչ ու ուսանելի օրինակներ:

Բայց անժխտելի է հետևյալ իրողությունը.

1. Սասունը և Դաշտի բազմաթիվ գյուղեր ամայացան ու հարյուրավոր հայեր դարձան թուրք զինվորների և քուրդ հրոսակների զոհը:
2. Աշխարհի գերիզոր տերություններից և ոչ մեկը որևէ ուշադրության չարժանացրեց տեղի ունեցող իրադարձությունները ու իր բողոքի ձայնը չբարձրացրեց ի պաշտպանություն Հայ Դատի և Սասունում ու Տարոնում զոհաբերվող հայ բնակչության:

Սասունի ապստամբության կազմակերպիչները հույսեր են փայփայել, որ Եվրոպական տերությունների ուշադրությունը գրավելու կարևորագույն նախադրյալներից, եթե ոչ կարևորագույնը, երկարատև կռիվներ մղելն էր և ըստ այդմ մեծադղորդ աղմուկ բարձրացնելը: Ընդհանուր Ժողովում անդրադառնալով նաև այդ հարցին՝ Անդրանիկը պատասխանել է. «Մենք եթէ երեք ամիս էլ կարողանանք դիմանալ, ոչ մէկ երաշխաւորութիւն չկայ թէ եւրոպացիք կը միջամտեն… »:

Երկրորդ. Ս. Զավարյանի համոզմամբ «…եթէ Սասնոյ փամփուշտների թիւը աւել լիներ՝ 40-50.000, մենք ահագին դրական հետեւանքների հասած կը լինէինք»:

Ի՞նչ նկատի ունի Ս. Զավարյանը: Իհարկե, խոսք լինել չէր կարող Սասունի ձեռնարկի հաղթանակի մասին: Պատասխանը անկասկած մեկն է. եթե Սասունի մարտիկները ունենային զոնե Ս. Զավարյանի մատնանշած 40-50.000 փամփուշտներ, ապա կարելի էր երկարատև դիմադրել ու ըստ այդմ մեծադղորդ աղմուկ բարձրացնել, որը կնպաստեր գրավելու Եվրոպական տերությունների ուշադրությունը: Այս ամենով հանդերձ, անժխտելի է այն իրողությունը, որ Սասունի պաշտպանների և նրանց օգնության շտապող քաջարի հայորդիների, հատկապես նրանց առաջնորդների՝ Հրայրի, Անդրանիկի, Գևորգ Չավուշի, Սեբաստացի Մուրադի ու մյուս հերոսների սխրագործությունների պատմությունները ժողովրդի մեջ տարածվելով ոգեշնչում և ազատության ու պայքարի տրամադրություն էին հաղորդում: Այս առումով Սասունի ապստամբությունն անկասկած դրական ազդեցություն գործեց ազգային-ազատագրական պայքարին զինվորագրվող սերունդների գաղափարական ու բարոյական դաստիարակության գործում:

Օգտագործված գրականության ցանկ

1. Անդրանիկ., «Կյանքը, պատերազմները և հուշերը», Պեյրութ 1932
2. Աղայան Ծ.Պ., «Հայ ժողովրդի ազատագրական պայքարի պատմությունից», 1976
3. Առաքելոց վանքին կռիվը, պատմեց Զոր. Անդրանիկ., գրի առավ Լուլեճյան Լ.Կ., Պոսթըն 1924
4. Բայբուրդյան Վ., Հայ-քրդական հարաբերությունները Օսմանյան կայսրությունում, Երևան 1989
5. Գևորգյան Հ., Ազատագրական պայքարի հերոսապատումից, Երևան 2006
6. «Դրօշակ», 1904թ., թիւ 12
7. «Դրոշակ», 1905թ., թիվ 2
8. Երիցանց Մ., Զօրաւար Սմբատի յուշերը, հ. Ա
9. Զեյթնլյան Սոնա., Հայ կնոջ դերը հայ հեղափոխական շարժման մեջ, Լիբանան 1968
10. Զոր. Անդրանիկ և իր պատերազմները, Կ. Պոլիս 1920
11. Թադևոսյան Ռ., Դրվագներ հայոց ռազմական պատմությունից,XIX-XX դարեր, Երևան 2012
12. Թառոյան Կ., Արևմտահայերի ազատագրական պայքարը XIX դարի վերջերին և XX դարի սկզբներին, Ե., 1980
13. Կարապետյան Համբարձում., «Անդրանիկ», Երևան 1992
14. Համբարյան Ա., Ազատագրական շարժումները Արևմտյան Հայաստանում (1898-1908թթ.), Ե., 1999
15. Համբարյան Ա., Սասունի 1904 թվականի գոյամարտը, 1989թ., N 4
16. Հայ ժողովրդի պատմություն, հ. 6, «Հայաստանը 1870-1917թթ.», Երևան 1981
17. Հայկական հարց. Հանրագիտարան, Ե., 1996
18. Հիշատակներ Բաղեշի առաջնորդութենես, գրեց Չիլինկիրյան Եղիշե Եպիսկոպոս., Երուսաղեմ 1925
19. Յեղափոխական Ալպում, 1972թ., թիւ 9
20. Ներսիսյան Ա., Ազգային ազատագրական պայքարը Տարոնում 1894-1908թթ, Երևան 1999
21. Նիւթեր Հ.Յ. Դաշնակցութեան պատմութեան համար, հ. Բ, Ժընև 1910
22. Պատմագրութիւն Հ.Յ. Դաշնակցութեան, հ Բ, Թեհրան 1981

23. Պողոսյան Հ.Մ., «Սասունի պատմություն», Երևան 1985

24. Ռուբեն հայ Յողափոխականի մը յիշատակները, Թեհրան 1982. Հ. Յ.

25. Սասուն-Մուշ կռիւները, Պէյրութ, 1965

26. «ՎԵՄ», 1934

27. Տարոնեան Էդ., Արիւնոտ եւ Արեւոտ էջեր

28. Ռաֆֆի., երկերի ժողովածու, հ. 9, 1958

29. Փափազեան Վ., Իմ յուշէրը, հ. 1, 1950

30. Փիրումյան Ռ.., Հայկական հարցի պատմություն, Երևան, 2002: